ՀԱՅՏԱՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն (ՕԳԱՆ)

ՓՈՔՐ ՖԵՐՄԵՐՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Հայտամրցույթի համարը՝ No 6534-01/2015/GenV/15-L&R/2016

Ավստրիական զարգացման գործակալությունը (ԱԶԳ) Եվրոպական միության և ԱԶԳ-ի ֆինանսական աջակցությամբ Հայաստանում օրգանական գյուղատնտեսությունը խթանելու նպատակով դիմումներ է ընդունում ՕԳԱՆ ծրագրի հայտամրցույթի մասնակցության համար:

Սիրով հրավիրում ենք օրգանական գյուղատնտեսական մթերքի արտադրությամբ հետաքրքրվող ***փոքր ֆերմերներին*** և ***փոքրածավալ գյուղատնտեսական մթերք վերամշակողներին,*** ովքեր ունեն գործող ֆերմերային տնտեսություն, և/կամ մշակում են հող, զբաղվում են վայրի խոտաբույսերի և հատապտուղների հավաքմամբ և/կամ գյուղատնտեսական/մեղվաբուծական արտադրանքի արտադրությամբ և վերամշակմամբ, դիմելու Փոքր ֆերմերների աջակցության ծրագրին:

Հրավերի նպատակն է խրախուսել և աջակցել փոքր ֆերմերներին և փոքրածավալ վերամշակողներին ավանդականից անցում կատարել ***օրգանական գյուղատնտեսության*** և/կամ զարգացնել իրենց՝ արդեն իսկ գոյություն ունեցող օրգանական արտադրության և վերամշակման կարողությունները:

Հայտադիմումների ձևին, նախնական պայմաններին և դիմելու գործընթացին կարող եք ծանոթանալ հետևյալ կայքէջից. http://www.entwicklung.at/ada/calls-auftraege/

Հարցերի, պարզաբանումների կամ խորհրդատվություն ստանալու համար խնդրում ենք ուղարկել էլ. նամակ oasi@ada.gv.at և hasmik.altunyan@ada.gv.at էլ. հասցեներին, զանգահարել **+374 60 650 286** հեռախոսահամարով, կամ այցելել

Ավստրիայի Հանրապետության դեսպանության
տեխնիկական համագործակցության գրասենյակ
Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն, 7-րդ հարկ, սեն. 714 – 716
ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1

Դիմումների ներկայացման վերջնաժամկետն է **2016թ.-ի հոկտեմբերի 24-ը, տեղական ժամանակով մինչև ժամը 16:00:** Հայտադիմումները պետք է ուղարկվեն փակ և կնքված և/կամ ստորագրված ծրարով: Ձեռագիր գրված և վերջնաժամկետից հետո ներկայացված հայտադիմումները չեն ընդունվում: Հայտադիմումները գնահատվելու են նախապես սահմանված չափորոշիչներով և մեթոդոլոգիայով: Ծրագիրը կապ կհաստատի միայն ընտրված դիմորդների հետ:

Հարգանքով՝
ՕԳԱՆ ծրագրի աշխատակազմ